ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի վերաբերյալ հասարակության կարծիքի ուսումնասիրության 2019 թվականին հունիս-դեկտեմբեր ամիսներին իրականացված հետազոտության արդյունքների վերաբերյալ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

25.01.2020թ.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ղեկավարվելով 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրով, կարևորում է իր արտաքին շահակիցների՝ գործատուների, համագործակցող ընկերությունների, ինչպես նաև շրջապատող հասարակության կարծիքները մասնաճյուղի գործունեության վերաբերյալ, ձգտում է ընդլայնել հետադարձ կապը հասարակության տարբեր խմբերի հետ, ներգրավվել տարածաշրջանային ծրագրերին և նախաձեռնություններին (ՌԾ, գործ. 3.1.5, 3.1.6), իրականացնել տարածաշրջանի պահանջարկին համապատասխան հիմնական (ՌԾ, խնդիր 1.1) և լրացուցիչ (ՌԾ, խնդիր 3.2) կրթական ծրագրեր: Այդ պատճառով իրականացնում է իր գործունեության գնահատում՝ ներառելով նաև արտաքին շահակիցների գնահատականները մասնաճյուղի գործունեության վերաբերյալ:

Մասնաճյուղը հարցումների միջոցով պարբերաբար իրականացնում է մասնաճյուղի շրջանավարտների և պրակտիկանը-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրություն գործատու կազմակերպություններում և մարզի դպրոցներում: Այդ տվյալների վերլուծությունները և արտաքին շահակիցների առաջարկներն օգնում են մասնաճյուղին վերանայելու իր կրթական ծրագրերը, դասավանդման և ուսումնառության մեթոդները, իսկ ամենակարևորը՝ քայլեր է ձեռնարկում զարգացնելու ուսանողների մասնագիտական պրակտիկ կարողությունները:

Մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինն իր հերթական ուսումնասիրություններն է կատարել, այս անգամ ընտրելով ուղղակի հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ: Հարցումն իրականացվել է 2019 թվականի հունիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում բաժնի ֆեյսբուքյան էջի միջոցով (https://www.facebook.com/EPHIMMKOA/?modal=admin_todo_tour), այսինքն առցանց: Հարցմանը արձագանքել և պատասխանել են մասնաճյուղի ուսանողների ծնողները, մտերիմները, շրջանավարտները, դպրոցականներ և այլն: Նման հետազոտություն առաջին անգամ իրականացվել է 2018 թվականի դեկտեմբերին՝ հասարակության հետ անմիջական հանդիպման և քննարկման միջոցով, որն անց են կացրել մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնին կից որակի ապահովման ներքին գործընթացներին աջակցող ուսանողական խմբի անդամները: Այդ հարցման ժամանակ իրականացվել էր հանդիպում-քննարկում միայն մարզի 50 բնակչի հետ, այդ հանդիպումների արդյունքների վերլուծությունը տեղադրված է մաս-նաճյուղի կայք-էջում՝ http://ijevan.ysu.am/wp-content/uploads/2015/12/varkanishavorum_harcum_19-.pdf):

Հերթական հարցման ժամանակ առցանց հարցմանը մասնակցել են Տավուշի մարզի (մեծամասամբ) և այլ մարզերի 32 համայնքների 183 բնակիչներներ, նույնիսկ հարցմանը մասնակցել է ՌԴ Մոսկվա քաղաքից մասնաճյուղի մեկ շրջանավարտ:

Հետևյալ դիագրամում ներկայացված է հարցմանը մասնակիցների թիվն ըստ քաղաքների, որոնցում ներառված են նաև տվյալ տարածաշրջանի փոքր համայնքներից մասնակիցների թիվը:



Հարցումն անանուն էր և մասնակիցների վերաբերյալ հավաքագրվել է միայն տեղեկատվություն նրանց բնակության վայրի, տարիքի և զբաղվածության վերաբերյալ:

Հարցմանը մասնակցել են մեծամասամբ 15-25 տարեկան անձինք՝ **79%**, որոնց գրեթե **81%-ը** սովորել/սովորում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում, իսկ **18%**-ը այս պահին աշխատում է: Այս տեղեկատվությունը հնարավորություն է տալիս ինչ-որ կերպ պարզել մասնաճյուղի շրջանավարտների զբաղվածությունը, նրանց հետ ապահովել հետադարձ կապ:





Մասնակիցներին առաջադրվել են հետևյալ հարցերը.

1. Ծանոթ եք արդյո՞ք «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (ԵՊՀ ԻՄ) գործունեությանը:
2. Գնահատեք ԵՊՀ ԻՄ-ի ունեցած դերը Տավուշի մարզի սոցիալ-մշակութային և ուսումնագիտական կյանքում:
3. Որտե՞ղ կցանկանայիք սովորել դուք, կամ որտե՞ղ խորհուրդ կտայիք սովորել Ձեր մտերիմներին:
4. Ի՞նչ պատճառով (կամ պատճառներով) կնախընտրեիք կամ ի՞նչ պատճառով (պատճառներով) եք նախընտրել սովորել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում:
5. Ի՞նչ պատճառով (կամ պատճառներով) կնախընտրեիք սովորել ՀՀ այլ բուհում:

Հարցման արդյունքները փաստում են, որ մասնակիցների **98%**-ը ծանոթ է մասնաճյուղի գործունեությանը, նրանցից 79%-ը սովորել կամ սովորում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում, իսկ

8%-ը պատրաստվում է սովորել մասնաճյուղում: Վերջինս փաստում է, որ հետազոտության ընթացքում հնարավորություն է տրվել ապագա դիմորդներին գնահատելու և ներկայացնելու իրենց կարծիքը մասնաճյուղի վերաբերյալ՝ նախընտրելով այն:



Հետազոտության արդյունքով հասարակության գնահատականը և կարծիքը մասնաճյուղի գործունեության վերաբերյալ կարելի է գնահատել լավ: 183 մասնակիցներից **91%**-ը, այդ թվում ուսանողներ, շրջանավարտներ, ծնողներ, գործատուներ և այլն, ԵՊՀ ԻՄ-ի ունեցած դերը Տավուշի մարզի սոցիալ-մշակութային և ուսումնագիտական կյանքում գնահատել է լավ, որից **60%**-ը՝ գերազանց: **Միջին գնահատականը կազմել է 4.5** (5 միավորանոց համակարգում):

Մասնակիցների **58%**-ը նշել է, որ կցանկանար սովորել, կամ մտերիմներին խորհուրդ կտար սովորել ԵՊՀ ԻՄ-ում:

Վերջին երկու արդյունքները բավականին գոհացուցիչ արդյունքներ են: Կարելի է ենթադրել, որ մասնաճյուղի գործունեությունը համապատասխանում է իր զարգացման ռազմավարական ծրագրին: **Նախ**, թափանցիկ է և հասանելի՝ քանի որ մասնակիցների 98%-ը տեղեկացված է մասնաճյուղի գործունեության մասին, **երկրորդ**, նրանք բարձր են գնահատում մասնաճյուղի դերը տարածաշրջանի ուսումնագիտական, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման գործում:





Մայր բուհի 25 տարեկան մասնաճյուղը Տավուշի մարզում տարիներ շարունակ եղել է միակ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունը: Վերջին 2 տարվա ընթացքում մարզում բացվել են այլ պետական ուսումնական հաստատություններ: Առողջ մրցակցության մեջ մասնաճյուղի ընդգծված առավելություններն են 6000-ից ավելի շրջանավարտները,

արդիական բաժինները, որակյալ մասնագետները, բարձր հեղինակությունը, երկարամյա փորձը և այլն:

Նշված կարծիքները ևս մեկ անգամ հիմնավորվել են այս ուսումնասիրության արդյունքներում: Մասնակիցները նշել են, թե ո՞րն է մասնաճյուղի առավելությունը և ի՞նչն է ուղղորդում հասարակությանը սովորելու համար ընտրել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը:



Ինչպես նշեցինք վերևում, ԵՊՀ ԻՄ-ն Տավուշի մարզում ունի իր կարևոր դերը, և այն բացի կրթական օջախ լինելուց սահմանամերձ մարզի համար լուծում է նաև մի շարք սոցիալական խնդիրներ: Այն տարածքային և ֆինանսական առումներով բավականին մատչելի է մարզի բնակչության համար, և այդ կարծիքին են հարցման մասնակիցների համապատասխանաբար 72%-ը և 43%-ը: Այսինքն, մասնաճյուղի կարևորագույն խնդիրը միայն որակյալ կրթության տրամադրումն չէ, մասնաճյուղի համար քիչ կարևորություն չի ներկայացնում նաև հասարակության ֆինանսական խնդիրը: Հաշվի առնելով սահմանամերձ մարզում գտնվելու և թիրախային խմբում ոչ շատ բարձր սոցիալական խավ ունենու փաստը մասնաճյուղը ուսումնառությունը կազմակերպում է մատչելի վարձավճարներով:

Ներկայացված արդյունքները ցույց են տալիս, որ հարցման մասնակիցների **43%**-ը կարևորել է մասնաճյուղում որակյալ կրթության ապահովումը, **30%**-ը՝ կարևորել է բարձրակարգ դասախոսական կազմի առկայությունը, **17%, 18%**-ի համար կարևոր է մասնաճյուղի բարձր հեղինակությունը և մրցունակությունը:

Այս արդյունքները կարելի է համարել բավարար և գոհացնող:

Արդյունքներից կարող ենք եզրակացնել, որ մասնաճյուղը շարունակում է նախընտրելի լինել մարզի բնակիչների կողմից: Տարածքային մատչելիությունն արդեն իսկ ընդգծում է մարզում մասնաճյուղի առավելությունը այլ ուսումնական պետական հաստատությունների նկատմամբ:

ՄԿՈԱ բաժնի կողմից դիտարկվել է նաև վերոնշյալ հարցի հակառակ կողմը, այսինքն, ուսումնասիրվել է հասարակության կողմից **այլ բուհ** ընտրելու պատճառները, ինչը հնարավորություն կտա ուշադրություն դարձնել այն խնդիրներին, որոնք կարող են ազդել մասնաճյուղի մրցակցային դիրքի վրա:



Ինչպես վկայում են հարցման արդյունքները, հիմնականում երկու կարևորագույն խնդիր կա, որոնց պատճառով մարզի դիմորդները կընտրեն այլ բուհ. մասնավորապես, մասնակիցների **59%**-ը նշել է անհրաժեշտ մասնագիտության բացակայությունը, **48%**-ը նշել է ուսմանը զուգահեռ աշխատելու հնարավորությունը, իսկ **16%**-ը նշել է այլ բուհի ավելի բարձր հեղինակությունը: Նշենք, որ մասնաճյուղն իր առջև խնդիր ունի ապահովել տարածաշրջանի աշխատաշուկան անհրաժեշտ մասնագետներով, ինչը և իրականացնում է: Տարբեր ուսումնասիրությունների միջոցով մասնաճյուղը հավաքում է տվյալներ աշխատաշուկայում պահանջված մասնագիտությունների վերաբերյալ, վերլուծելով իր հնարավորությունները իրականացնում է համապատասխան կրթական ծրագրեր, ինչպես օրինակ վերջին 4 տարիների ընթացքում ներդրված և տարածաշրջանում պահանջված մի քանի կրթական ծրագրերը. «Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Զբոսաշրջություն», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Հոգեբանություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Դեկորատիվ կիրառական արվեստ»: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մարզում խիստ պահանջ կա աշխարհագրության, կենսաբանության, քիմիայի, տեխնոլոգիայի և ֆիզկուլտուրայի ուսուցիչների, իրավաբանների և իրավագետների, շինարարության ինժեներների, նախնական զինվորական պատրաստության ուսուցչի, բժշկական կիբեռնետիկայի և այլն: Նշենք, որ նշված մասնագիտությունների համար մասնաճյուղն առայժմ կրթական ծրագրեր չունի, սակայն 2020թ. սեպտեմբերից մասնաճյուղում ներդրվող մագիստրոսական «Ընդհանուր մանկավարժություն» կրթական ծրագրով մասնաճյուղը հնարավորություն կունենա նշված աշխատատեղերի հետ կապված հարցը լուծել և բավարարել մարզի դպրոցներում համապատասխան ուսուցիչների պահանջարկը:

Վերլուծելով հարցման արդյունքները կարող ենք փաստել ԵՊՀ ԻՄ-ի արդյունավետ և բավարար գործունեությունը: Հարցումը ՄԿՈԱ բաժնի կողմից կշարունակվի իրականացվել, ավելի ընդգրկուն և ավելի բարելավված:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին